


# ԲԱԳՎԻ ԿՈՄՈՒՆԱՆ



ՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿ. ՄՈՍԿՎԱ, 1929



ՅԵՐԱՎԵ

# ԲԱԳՎԻ ԿՈՄՈՒՆԱՆ

Ա 8729



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1929

Кн. ф-ка ЦИЗ'а Народов СССР. Москва, Шлюзовый пр., 6.  
Главлит А—41088. Заказ № 1394. Тираж 3000 экз.

## ԲԱԳՎԻ ԿՈՄՈՒՆԱՆ

Մեծ և Բագվի կոմունայի դերը Միության ու Անդրկովկասի բանվորական հեղափոխական շարժման պատմության մեջ։ Ծավալվող և խորացող դասակարգային պայքարի անմիջական արդյունք հանդիսանալով, նա Անդրկովկասում պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու առաջին հերոսական փորձն եւ։ Բագվի կոմունան վորակես պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրա, չնայած իր կարճատես գոյությանը, նշանակալից և ուսանելի շատ կողմեր ունի։

Հայունի յե, թե Մարքսը վորագիսի ուշադրությամբ ու մանրամասնությամբ վեր և հանել Պարիզի կոմունան — 1871 թվի քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում, տալով նոր դարաշրջանի պատմության համար այնքան անհրաժեշտ այդ խոշորագույն անցքերի անալիզը և գնահատականը։ Նույնպիսի խորությամբ ե մոտեցել այդորինակ հարցերին Լենինը։ Հերիք և հիշել այն ուշադիր վերաբերմունքը, վոր ցուցաբերեց նա դեպի 1905 թ. Մոսկվայի դեկտեմբերյան զինված ապստամբությունը։

Բագվի կոմունայի ուսումնասիրությունը կարևոր ե վոչ միայն պրոլետարիատի ու նրա կուսակցության

անցյալ մարտական աշխատանքը ճիշտ գնահատելու, կոմունայի ստրատեգիայի և տակտիկայի բոյլշեկլյան պարզորոշ արժեքավորում տալու, այլ և Անդրկովկասի մեր այս որվա պայքարն ու շինարարությունն ել ավելի ամրացնելու համար։ Զպիտի մոռանալ, վոր Բագրի կոմունայի անկման ներքին ու արտաքին պատճառները վորոշ չափով յուրահատուկ պայմանների արդյունք են և այդ տեսակեաից անպայման տակտիկական դասերի աղբյուր կարող են դառնար։

Մեր նպատակն ե մի շարք նյութերի և փաստական տվյալների վրա հիմնված լուսաբանել կոմունայի կյանքի և անկման պատճառների մի քանի կողմերը, հարկ յեղած դեպքում տալով նաև դեպքերի անհրաժեշտ խրոնիկան։

Նախ և առաջ մի քանի խոսք արտաքին այն պայմանների մասին, վորոնցով շրջապատկած եր Բագրի կոմունան և վորոնց մեջ նա ստիպված չի աշխատել։ Հայտնի յե, վոր Անդրկովկասը ևս համաշխարային պատերազմի ընթացքում և թե նրանից հետո դարձել եր իմպերիալիստական խմբավորումների փոխադարձ բախման թատերաբեմներից մեկը։ Տարիների ընթացքում զարգացող իմպերիալիստական պետությունների ներհակությունն այստեղ անմիջորեն արտահայտվեց Բագրի համար մղած կովում։ Արևմուտքից գերմանուտաճկական, իսկ հարավ-արևելքից անգլիական իմպերիալիստները 18 թվին ձգտում եյին դեպի Բագու։ Յեվ այդ վոչ միայն Բագրին տիրանալու լոկ վորպես

նավթաշխարհի: Անշուշտ այս հանգամանքն ևս շատ կարևոր դեր եր խաղում, սակայն դրա հետ միասին եյական նշանակություն ուներ նաև այն, վոր Բագուն գտնվում եր միջին արևելքը Յեվրոպայի հետ կազող ճանապարհի վրա: Տիրել Բագվին, այդ նշանակում եր նաևթային խոշոր պաշարներ ձեռք բերելուն զուգընթաց էր ձեռքումն ունենալ կարեորագույն ստրատեգիական պունկտերից մեկը:

Այս ուղղությամբ մեծ ջանքեր թափած անգլիական իմպերիալիզմը 18 թվին առանձին հոգատարությամբ ձեռնամուխ ել լինում այդ պլանի իրագործմանը: Այդ նպատակով անգլիացիները ծովի կողմից վորոշ քանակի ռազմական ուժեր են կենարոնացնում հյուսիսային Պարսկաստանում, Ենգելիի շրջանում: Իսկ գերմանոսուլթանական իմպերիալիզմը, վոր մեծ թափ եր առելիրեն ձեռնտու Բրեստի դաշնագրից հետո ստեղծված դրությունից, արևմուտքից՝ Ղարսի վրայով նույնպես ամեն բան անում եր Բագուն ձեռք դցելու համար:

Միաժամանակ իմպերիալիստական այդ խմբավորումները նպատակ են դնում Բագվի պես կարեորագույն կետում ամրանալով խոչնդատներ հարուցել ուսւական հաղթանակող մեծ հեղափոխության առաջ և ըստ հնարավորին արշավել դեպի հյուսիս: Այդ նպատակով գործի յեր դրված Ռուսաստանի ներսի վողջ հականեղափոխությունը:

Զպիտի մոռանալ, վոր 17-18 թվերը Ռուսաստանի բանվորների և գյուղացիների համար ամենածանր տա-

ըիներն եյին։ Պատերազմի հետևանքով առաջացած յերկրի ներսի քայլայվածությունն ու ավերվածությունը լրացվում են հականեղափոխական գեներալների ու սրանց բանդաների ակտիվ յելութներով։ Արտաքին իմպերիալիստական ողակավորման, ներքին տնտեսական ամենածանր կացության և մենշևիկների ու եսերների դավադիր աշխատանքի դժոխային պայմաններում համառ հերոսական պայքար եյին մղում Ծուսաստանի բանվորներն ու գյուղացիները բոյլշևիկների դեկավարությամբ։

Ահա անորինակ ծանր և դժվարին դրության մեջ և, վոր առաջ ե գալիս Բագվի Խորհրդային իշխանությունը, Բագվի հերոսական Կոմունան։ Գերմանուտաճական և անզիական իմպերիալիզմի ուժերի գրոհի հանդեպ, կտրված ու մեկուսացած բանվորազյուղացիական հեղափոխական Ռուսաստանից, նրանից անմիջական ոդնություն ստանալու հնարավորությունից զուրկ և եսերողաշնակմուսավաթ մենշևիեյան դավադիր աշխատանքով շրջապատված, գործի յե դիմում Բագվի կոմունան։

Համաշխարային պատերազմի ընթացքում մասսաների տնտեսական վատթար դրության հետևանքով սրված դասակարգային պայքարը անխուսափելիորեն արտահայտվում է նաև Անդրկովկասում։ Պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական մասի արթնացումը և բոյլշևիկյան կուսակցության շարքերի աստիճանական ամրացումը զգացվում է և Անդրկովկա-

սում։ Դեռևս վետրվարյան բուրժուական հեղափոխության ալիքները աշխուժություն են մտցնում Անդրկովկասի քաղաքական հասարակական կյանքում։ Աշխատանքի ասպարեզ են յելնում բոլոր քաղաքական հոսանքները, սկսած ձախ կուսակցություններից, բուրժուական ազգայնականներից մինչև կաղետները։ Ինչպես կենտրոնում, այնպես ել այստեղ Անդրկովկասում իշխանությանը տիրանում են բուրժուական կուսակցությունները, հաստատվում ե կապիտալի դիկտատուրան։ Թե Անդրկովկասյան կոմիսարիատը և թե նրան հաջորդող Սեյմը, մենշեկիների, դաշնակցականների, և մուսավաթականների ակտիվ մասնակցությամբ կիրառում են բուրժուական դիկտատուրայի սկզբունքները, թագնվելով սոցիալիստական կեղծ ֆուազիոնզիայի տակ։ Սակայն այդ կուսակցությունների՝ յերկիրը իմպերիալիզմի գաղութավայր դարձնելու քաղաքականությունը, հականեղափոխության ստացած ծանր հարվածներ Ռուսաստանի ներսում, տնտեսական կյանքի ամբողջական քայլայումն, որեցոր մասսաների դրության վատթարումը նրանց դարձնում են ընդդիմադիր հանդեպ տիրող կարգերի։ Հեղափոխական ընդդիմադիր այդ առողջ տրամադրությունը հասկանալի պատճառներով ավելի ուժեղ է ընդունակի արտահայտություն ե գտնում քանվորաշատ Բագվում, Անդրկովկասի հեղափոխության միջնաբերդում, ուր համեմատաբար ավելի ուժեղ եր նաև պրոլետարիատի հեղափոխական ավանդաբարդը — բոյլշեկիյան կուսակցությունը։ Կենտրոնացած վորակյալ բան-

վորությունը, կոփամած պրոֆեսիոնալ հեղափոխական-ների ստվար կադրը չելին կարող առանձնահատուկ շեշտ ու թափ չտալ Բագվի կազմակերպություններին, նրանց դերին հեղափոխական շարժման մեջ:

Ահա թե ինչու այստեղ իշխանության բուրժուական դիկտատուրայի որդանին զուգընթաց փետըրվարյան հեղափոխությունից հետո հիմնվում ե բանվորական պատգամավորների խորհուրդը, ուր բոյլշեվիկները կազմում ելին փոքրամասնություն: Յեթե բանվորական պատգամավորական խորհուրդը մասսաների պահանջով ու բոյլշեվիկների գրդումով անվերջընդհարվում եր բուրժուական դիկտատուրայի որդան՝ «Հասարակական կազմակերպությունների Գործկոմի» հետ, ապա միաժամանակ նույն խորհրդի ներսում պայքար եր տեղի ունենում բոյլշեվիկների ու բոլոր գույնի համաձայնականների միջև: Իրենց բաց թողած կոչերից մեկում մենշեվիկները պարզ կերպով դնում ելին բոյլշեվիկների հետ ունեցած հիմնական տարածայնությունների հարցը:

«Մեր հեղափոխության բնույթի հարցերում, ներկա մոմենտի խնդիրների նկատմամբ ունեցած հայացքներում, պայքարի տակտիկական պրիորներում, կուսակցության ներսում տարածայնություններ գոյություն ունեն... Պառակտման առաջն առնելու համար փոքրամասնությանն իրավունք և հնարավորություն պիտի տալ պաշտպանելու իր տեսակեանները\*»:

\* Сур. Шаумян, „Бакинская коммуна“, Էջ 3.

Մենչեփկների ընդհանուր ժողովի բյուրոյի հաճանաբարությամբ այս կոչն ուղղվում է Բագվի պրոլետարիատին:

Բոյլշևիկները դբան պատասխանում են, վոր միասնական աշխատանքը հնարավոր և ցանկալի չե: 17 թ. աշնանը Բագվի Խորհուրդը համարյա ամենեին չեր արտահայտում լայն մասսաների տրամադրությունը: Նրա զեկավարները՝ Եսեր Սաքո Սահակյանի գլխավորությամբ պայքարում եյին բոյլշևիկների դեմ: 17 թ. հոկտեմբեր 13-ի նիստում ընդունվում է Ստեփան Շահումյանի առաջարկը խորհրդի գործադիր կոմիտեյի հրաժարականն ընդունելու մասին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տարածայնությունները խորհրդի ներսում ել ավելի սրվում են: Նոյեմբերի 2-ի նիստում վճռական կոիվ ե տեղի ունենում, վորից հետո սոցիալիստական բլոկը թողնում է խորհրդի նիստը:

Այդ նույն նիստում Ստեփան Շահումյանը հարց է դնում «Հասարակական կազմակերպությունների Գործկոմը» վերացնելու մասին: Սրված և իրենց համար աննպաստ դրությունը պահ մի շվարեցնում է մենշևիկներին, դաշնակներին, մուսավաթականներին ու եսերներին, Բագվի հակահեղափոխությունը: Ցերկի նախատեսնելով այդ և նոյեմբերի 2-ի դեպքը, աջ եսեր Ռուբեն Բեգզադյանը դեռևս հոկտեմբերի 25-ին հետեյալ հեռագիրն ե ուղարկում Թիֆլիս խորհուրդը: Անդրկովկասյան կենտրոնին. «Բագվում ծավալ-

վուս են դեպքերը, իշխանությունը բռյլշեիկների կողմից գրավելու վտանգ գոյություն ունի։\*

Սակայն բուրժուազիայի ներկայացուցիչ, նրա գործի համար պայքարող հեղափոխական այդ կուսակցությունները խորհրդից հեռանալով ստեղծում են մի նոր կազմակերպություն՝

«Հասարակական Ապահովության Կոմիտե» անվան տակ։ Իրենց հույսը նոր ստեղծված հակահեղափոխական կազմակերպության վրա դնելով և նրա հետ հաջողությունների հեռանկար կապելով այդ նույն կուսակցությունների ներկայացուցիչը վերոհիշյալ առաջին հեռագրից հետո մի այլ հեռագիր եռուղարկում Թիֆլիս։ «Վորոշ հույսեր կան սրված փոխհարաբերությունները լիկվիդացիայի յենթարկելու, հիմնված են հասարակական Ապահովության Կոմիտե զանազան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչներից, համապատասխան նախագահությունով»։\*\*

Նորաստեղծ Հասարակական Ապահովության այդ Կոմիտեյի հետեւյալ կոչը պարզ գաղափար ե տալիս նրա բնույթի և նպատակների մասին։

«Ամբողջ յերկրի և դեմոկրատիայի կամքի վրա վոճրագործ ձնշում ե գործադրվում։ Անմիտների մի խումբ արյունահոսությամբ տառապող հայրենիքին

\* «Как большевики пришли к власти в 17—18 г.г. в Бакинском районе», б.г.-10.

\*\* Նույն տեղը.

հրում են դեպի անարխիայի և յեղբայրասպան պատերագմի գիրկը»):\*

Հայրենիքի և դեմոկրատիայի անունը Բագվի հականեղափոխական կուսակցությունները ևս ոգտագործում են ամեն քայլափոխում: Հետաքրքրականն այն է, վոր գաղտնի պատերազմի պատրաստվող դավագիր այդ կուսակցությունները հանդինություն ունեյին դեռմեղայական կարդալու բոյլշիկների հասցեյին: Շուտով այդ կոմիտեն դառնում է Բագվի հականեղափոխության ձգողական և կազմակերպչական կենտրոնը: Նրա շուրջն են համախմբվում բոլոր սոցիալիստական կուսակցությունների և հեղափոխական դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հայկական և թուրքական ազգային խորհուրդները ևս շրջապատում են Հասարակության Ապահովության կոմիտեյին: Իսկ ոեալ ուղմական ուժը գտնվում եր ազգային այդ խորհուրդների ձեռքում: Բագվի խորհուրդը ստիպված ե լինում մեծ ուշադրություն դարձնելու դեպի բարձրացող ու ձևակերպվող հականեղափոխությունը, մանավանդ վոր, բացի Հասարակության Ապահովության կոմիտեյից, գոյություն ունեյին նաև ուրիշ հակառակորդ կազմակերպություններ, ինչպիսին եյին Հասարակական կազմակերպությունների Գործկոմը և Բագվի քաղաքային ինքնավարությունը: Այս վերջինը վոչ միայն մունիցիպալ, այլ և քաղաքական որգան եր: Իզուր չե, վոր բուրժիազիս ձգտում եր այն

\* Сур. Шаумян, „Бакинская Каммуна“, № 8.

դարձնելու իշխանության մարմին, այսպես որինակ՝  
այդ ինքնավարությունը դրամանիշներ եր բաց թող-  
նում:

Բոյլշևիկների հեղափոխական անհաշտ լոգունգների  
ազդեցության ներքո Բագվի խորհուրդը մեկը մյուսի  
յետեից վորոշում ե կայացնում, վերացնել և ցրել  
բուրժուական դիկտատուրայի աշկարա որդանները —  
թե Հասարակության Ապահովության Կոմիտեն և թե  
Հասարակական Կազմակերպությունների Գործկոմը:  
Վորոշ ժամանակ անխուսափելի կերպով սպասողա-  
կան վերաբերմունք հայտնաբերելով դեպի բուրժու-  
ազիայի համախմբման և կազմակերպման կենտրոն-  
ները, Բագվի Խորհուրդը մի քիչ ուժեղացնելուց  
հետո անմիջապես հեղափոխականորեն դնում է դրանց  
ցրման հարցը: Սուր. Շահումյանը շատ վորոշակիորեն  
հայտարարում է: Բագվի խորհրդի նմանորինակ տակ-  
տիկայի մասին:

Փետրվարյան Հեղափոխության և մասնավորապես  
Հուլիսային որերից հետո այնքան շեշտակի դարձած  
յերկիշխանությունն իր տենդենցներով անխուսափե-  
լիորեն իրեն զգալ եր տալիս և Բագվում: Զնայած  
նրան, վոր ձեականորեն իշխանությունը գտնվում եր  
բանվորների և զինվորների պատգամավորական խոր-  
հրդի գործկոմի ձեռքին, սակայն գոյություն ունեցող  
յերկու ազգային խորհուրդները մեծ ազդեցություն  
և ոեալ ուժ ունեցին իրենց տրամադրության տակ:  
Փաստորեն այդ ազգային խորհուրդները բուրժուա-

կան իշխանության նախատիպերն ելին: Զինված ուժերը գտնվում ելին ազգային խորհուրդների տրամադրության տակ: Առանձնապես շատ ուժ ուներ Հայոց Ազգային Խորհուրդը, քանի վոր թուրքերն ավելի քիչ ելին զինված է, վոր գլխավորն ե, զինվորական ծառայության համար մեծամասնությամբ անվարժ: Կուսակցական բոյլշկիկյան կազմակերպությունը թույլ եր: Թույլ եր կուսակցական աշխատանքը նաև բանակում:

Կարմիր Գվարդիայի ջոկատներն ունելին միասին վերցրած 300—400 մարդ, առանց զինվորական ծառայության փորձի և վորակյալ հրամկազմի: Ճիշտ ե, Խաղմահեղափոխական Խորհուրդը Թիֆլիսից Բագու փոխադրվելուց հետո՝ վորոշ աշխատանքներ տարվում են այդ ուղղությամբ, բայց անբավարար: Բացվում ե հրամկազմի դպրոց: Ընդհանրապես պիտի շեշտել, վոր հրամկազմի բացակայությունը զգացվում եր շատ սուր կերպով: Բացի այդ, չափազանց դժվար եր աշխատանքը ազգային փոխարարերությունների խառնիճաղանձ պայմաններում և լարված մթնոլորտում: Բոյլշկիկյան կուսակցությունը՝ իշխանությունը նվաճելու գործով զբաղված, գործադրում եր ամենազգուշավոր տակտիկա՝ ազգային կոտորածներից խուսափելու համար: Բայց մարտի սկզբներին տեղի ունեցած մի դիպլամած քիչ եր մնում հրահրի ազգային լարված մթնոլորտը: Միմիայն շնորհիվ բոյլշկիների ճիշտ և խելացի տակտիկային հնարավոր ե դառնում խուսափել դրանից: Այսպես կոչված «վայրենի դիմիզիայի»

սպաները զինաթափ են արվում Կարմիր Գվարդեյան կանոների կողմից։ Թուրք Ազգային Խորհուրդը առաջինն իր զորքերը դուրս է բերում Կարմիր Գվարդեյան կանոների դեմ։ Այստեղ հետաքրքրական է Հայոց Ազգային Խորհրդի դիրքը։ Նա սպասողական դրությունից բղխող դիրքավորում է ընդունում, նախորոք խոստանում է ոժանդակել Թուրք. Ազգային Խորհրդին և նրան կովի հանելուց հետո հայտարարում է իր չեզոքության մասին։ Դժվար թե Թուրք Ազգային Խորհրդը հանդես գար, յեթե հույս չունենար դաշնակցի ոգնության վրա, ասում է ընկեր Սուրեն Շահումյանը։ Միայն կովի յերկրորդ որը դաշնակները ևս մասնակցեցին, կանգնելով հաղթողների, խորհրդի կողմը։ Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, վոր նրանց մասնակցությունը սկիզբ դրեց ջարդի ու հրդեհների, ինչպես և թալանի։ Սակայն դաշնակներին չհաջողվեց քաղաքացիական պատերազմի այդ կոնկրետ դեպքն ազգային կոտորածի վերածել։

Մուսավաթ կուսակցությունը իրմով ներկայացնում եր թուրք յերիտասարդ բուրժուազիայի և կալվածատերերի շահերի արտահայտիչը։ Մի կողմից Բագվում և Անդրկովկասում ուժեղ դիրքեր գրաված հայկական բուրժուազիան, մյուս կողմից ագրարային խլրտումները թուրքական գյուղերում, ստիպում եյին թուրք բուրժուազիային և կալվածատերերին մոռանալ իրենց շահերի հակասությունը և միասնական ֆրոնտով հանդես գալ։ Թուրք բուրժուազիայի և կալվածատերերի

(գլխավորապես Գրանձակի նահանգի) միացյալ կուսակցության ստեղծումը տեղի ունեցավ՝ 17 թվի հունիսին։ Այդ առթիվ հրապարակվում է հետևյալը։

«Մուսավաթ (հավասարություն) ազգային գեմուկրատական կուսակցության՝ վորն աշխատում եւ ահա մի քանի տարի՝ և հեղաշրջումից հետո կազմված թուրք ֆեդերալիստների կուսակցության միջև կայացած եւ համաձայնություն։ Բաց եւ մնում միայն ագրարային հարցն, դա կուսակցության առաջին համագումարում քննելու նպատակով»։\*

Փաստորեն նոր կուսակցության մեջ դեկավարող և գլխավորող դերը պատկանում եր թուրք բեկերին ու խաներին։ Բուրժուական մուսավաթ ազգային դեմուկրատական կուսակցությունն իրեն սպառնացող ընդհանուր վտանգի հանդեպ կավիտուլյացիայ յեւ անում կարվածատերերի առաջ։ Մասամբ, թերեւս, դրանով պիտի բացատրել այն հանգամանքը վոր հայ բուրժուազիայի և թուրք բուրժուազիայի միջև համաձայնութան գալու և միշտ միասնական ֆրոնտով հանդես գալու գործը խախուտ հիմքեր եւ ունենում։ Զարաչար սխալվում են նրանք, վորոնք այդ բացատրում են ազգային մոմենտով։ Այդպես մտածել՝ կնշանակի տուրք տալ բուրժուական իդեալիզմին, հրաժարվել մարքսիզմի հիմքը կազմող դասակարգային մոտեցումից։ Մենք կարծում ենք, վոր այդ հարցում ամենաչնչին կասկած անգամ չեն կարող լինել։ Հիմնովին

\* М. Д. Гусейнов, Партия „Мусават“, № 26

սխալ ե այն տեսակետը, թե դաշնակցականները Բագուն պաշտպանում եյին թուրքերից նրա համար, վորակտիվ ատելության զգացմունք եյին տածում դեպի Մուսավաթը և վախենում եյին հայկական բնակչության կոտորածից՝ Բագուն գրավելու դեպքում։ Վոչ հեռու անցյալի պատմությունն ապացուցում է, վորդաշնակները հայ բնակչության կոտորածից վոչ միայն չեն խուսափել, այլև իրենց քաղաքականությամբ միշտ ել նպաստել են դրան։ Իսկ Մուսավաթի հետ նրանք հայ բուրժուազիայի կամքից յելնելով փորձել են համաձայնության լեզու գտնել, չնայած նույնիսկ նրան, վորայի շրջանում Մուսավաթի ներսում վճռական խոսքն պատկանում ե բեզերին ու խաներին։

Այսպես, Բագվի Խորհրդի նիստերից մեկում 18 թվի փետրվարին դաշնակցության ներկայացուցիչը վերաբեկենում և հայտարարում, վոր կատեզորիկ կերպով բողոքելով այն թունավորման դեմ, վոր «Ի՞ն վեստիա»-ին եջերում տարվում ե իր կուսակցության նկատմամբ, դաշնակցական ֆրակցիան, վորպես բողոքի նշան, թողնում ե նիստը։ Դաշնակցության ներկայացուցիչի յետեից նույն բովանդակությամբ հայտարարություն ե անում և նույն կերպ վարվում Մուսավաթի ներկայացուցիչը։ Մի այլ դեպք։ «Ազրբեջան» թերթը 19 թվին պատմում եր, թե մարտի դեպքերի նախորյակին, յերբ այդ դեպքերը հասունացել եյին և անխուսափելիորեն պիտի տեղի ունենային, Թուրք Ազգային Խորհրդին են ներկայանում։ Հայոց Ազգային

Խորհրդի ներկայացուցիչները և հայտարարում են,  
վոր նրանք բոյլշեիկների հետ չեն: Բոյլշեիկները կողմ-  
նակից են դասակարգային պայքարին, իրենք դրա հետ  
վոչ մի կապ չունեն և վոր պետք ե իրենց գործո-  
ղությունները համաձայնեցնեն Մուսավաթի հետ:\*

Այսպիսով հիմնովին սխալ ե այն կարծիքը, վոր  
դաշնակցությունը և Մուսավաթը Բազվի դեպքերին  
վոչ մի հարցում միացյալ ճակատով հանդես չեն յե-  
կել: Ել չենք խոսում նրանց միատեղ աշխատանքի  
մասին, ինչպես Հասարակական Կազմակերպություն-  
ների Գործկոմում, այնպես ել Հասարակության Ապա-  
հովության Կոմիտեյում: Այդ իր հերթին չի բացա-  
սում այն հանգամանքը, վոր հակադրություն գոյու-  
թյուն ուներ յերկու ազգային խորհուրդների միջև:  
Այդտեղ հայկական լայն մասսաների ազգային զգաց-  
մունքներն ոգտագործելուց բացի հիմնական դեր ե  
խաղում դաշնակցության հայ ըուրժուազիայի անգիտ-  
կան որիենտացիան: Սակայն այդ մասին մի քիչ հետո:

Մի քանի խոսք մարտի դեպքերի մասին: Ընկեր  
Սուրեն Շահումյանը իր հիշողություններում գրում  
է, վոր այդ կարևորագույն անցքերի լուսաբանման  
գործում, անգամ մեր կուսակցության շարքերում,  
սխալ տեսակետներ կան: Դեպքերի լենինյան ստրա-  
տեգիայի ու տակտիկայի ճիշտ անալիզը մեզ բերում  
ե այն յեզրակացության, ինչպես այդ իրավացիորեն

\* Как большевики пришли к власти в Бак. районе,  
եջ 17—18

նկատում ե Սուրեն Շահումյանը, վոր մարտի անց-  
քերն իրենց հիմքում ունենալով դասա-  
կարգային պայքարի մոմենտը, Բագվի իրա-  
կանության կոնկրետ պայմաններում ան-  
խուսափելիորեն ազգային գունավորում  
են ստացել, մանավանդ վոր այդ ուղղությամբ  
հսկայական պրովակացիոն աշխատանքներ եյին կա-  
տարում ներսի և դրսի հականեղափոխությունները:  
Այդ մասին Բագվի կոմունայի ակտիվ մասնակիցնե-  
րից ընկ. Ս. Գաբրիելյանը Աստրախանից հետե-  
յալն ե գրում Ստեփան Շահումյանին:

«Բոլորը միաձայն ասում են, վոր Բագվում հայ-  
թուրքական կոտրած ե տեղի ունենում և այդ կոտո-  
րածն առաջացրել են հայերը: Այդ լեզենդան գնում  
ե դեպի վեր Վոլգայով, տարորինակ անվտան վերա-  
բերմունք ստեղծելով նույնիսկ մի քանի կազմակեր-  
պությունների շրջանում»:\*

Իսկ Եսերական «Հաշ Գոլօօ»-ը գրում եր. «Մեզ  
մոտ ինչ ուզում եք յեղել ե, բայց վոչ քաղաքացիա-  
կան պատերազմ»:

Բայց եյականն այն ե, վոր մարտի դեպքերն իրենց-  
մով նոր շրջան են ստեղծում Բագվի Խորհրդի պատմու-  
թյան մեջ: Յեթե նկատի առնենք, վոր Բագվի Խոր-  
հուրդը պաշտպանող Կարմիր Թվարդեյականների դեմ  
կովի եյին դուրս յեկել Մուսավաթի ստեղծած ու նրա  
տրամադրության տակ յեղած գորամասերը, վորոնք

\* Сур. Шаумян, „Бакинская Каммүна“, № 94

մեծ մասամբ բաղկացած ելին յունկերներից, խանութպաններից, տնատերերից և զոչիներից, բեկադարարական հրամանատարության ղեկավարությամբ, ապա հարցը միանգամայն կպարզվի: Բացի այդ, հիմնական նշանակություն ունի վոչ այնքան կռվի մասնակիցների կազմը, վորքան կռվի պարզորոշ լոգունգները:

Հայոց Ազգային Խորհրդի տրամադրության տակ յեղած զորամասերի մասնակցությունը, ինչպես մարտի անցքերին, այնպես ել ընդհանուրապես Բագվի Կոմունայի պաշտպանության գործին, հետևանք են վոչ թե «Կոմունայում տիրող հայկական դիկտատուրայի», այլ պարզապես նրան, վոր Կոմունան իր տրամադրության տակ անհրաժեշտ զինվորական ուժեր չունենալով ստիպված եր պրոլետարական հեղափոխություն շահերից յելնելով ոգտագործել ազգային այդ գնդերը, հակառակ դաշնակցականների ստեղծած դժվարություններին ու խոչնդոտներին: Թերեւս, դաշնակցականները ռեալ կյանքի հակասություններից բղխող պատմական այդ փաստը հետագայում ոգտագործել են՝ Խորհրդային Խվանության և Կոմունայի ջերմ պաշտպաններ ու բարեկամներ իրենց դուրս բերելով: Սակայն դրանով նրանք միզուցե թող փչեն միայն միամիտների աչքին: Իրական համառ փաստերը միանգամայն հակառակն են ապացուցում: Նրանք անվերապահորեն հաստատում են, վոր դաշնակցա-

կանները Բագվի Կոմունայի դեմ պայքարող հակա-  
նեղափոխական գնդի ամենաակտիվ զինվորներն են  
յեղել, միշտ և ամեն կերպ նրանք աշխատել են դա-  
սակարգային պայքարն ու քաղաքացիական պատե-  
րազմն ոգտագործել ազգային անտագոնիզմը հրահրե-  
լու և անզինական իմպերիալիզմի շահերը պաշտպանելու:  
Նրանք Բագվի պաշտպանության գործում կատարած  
իրենց դերը ի չարը գործ դնելով կազմալուծել են  
ֆրոնտը, չեն յենթարկվել ընդհանուր հրամանատա-  
րությանը, և հայ սպաների միջոցով թալաններ ու  
կոտորածներ են կազմակերպել ֆրոնտին մոտ գտնվող  
թուրք գյուղերում: Անզինացիների հետ անվերջ բա-  
նակցությունների մեջ մտնելով, այդ վերջինների գա-  
լուստը շտապեցնելու նպատակով, նրանք առանձնա-  
պես մեծ ու շաղրություն են դարձրել բանակի դիս-  
ցիպինան խախտելու և ֆրոնտը քայքայելու վրա:  
Յեվ այդ իհարկե նրանց հաջողվում եր, քանի վոր  
հրամկագմը, նույնպես դաշնակցական սպաներից  
կազմված, ակտիվ կերպով իրագործում եր հայ բուր-  
ժուազիայի կամքը: Այդ տեսակետից հետաքրքրական  
են հետեւյալ փաստաթղթերը: Ռուսաստանից յեկած  
փոքրաթիվ զորաբանակի հրամանատար Պետրովը Ստե-  
փան Շահումյանին և զինվորական կոմիսար Կորգանո-  
վին ուղղած իր հեռագրում, գրված 18 թվի հուլիսի  
25-ին, ասում է.

«... Համագասպի հեծելազորն ուզում ելին տանել  
այն մոմենտին, յերբ յես այդ չեյի կարող նկատել,

չնայած կարգադրության, վոր նրանք չգնան, նրանց  
լառաջարկված եր գնալ Բագու... նախազգուշացնում  
եմ իբրև զինվորական, վոր գործի այդպիսի  
կազմակերպման դեպքում վոչ թե պատերազմ  
կլինի, այլ խառնաշփոթություն, ուր ամեն ինչ կկոր-  
ծանվի»:<sup>\*</sup>

Համազասպը և մյուս դաշնակցական հրամանա-  
տարներն ու սպաները Հայոց Ազգային Խորհրդի թե-  
ադրանքով կարող եյին թողնել ֆրոնտը, խանգարել  
և կազմալուծել Բագվի հեղափոխական պաշտպանու-  
թյան գործը:

Վոմն դաշնակցական Թառայան պարզ կերպով  
դնում ե այն հարցը, վոր մարտի քաղաքացիական  
կորիմներին մասնակցելով իրենք ցանկացել են Գան-  
ձակի վրեժն առնել: Իր ընկերներից մեկին գրած  
նամակում նա ասում է.

«Յերեք ժամ շարունակ ամեն կողմից սկսեցին  
նրանց (թուրքերին) կոտորել և միենույն ժամանակ  
նրանց տներն այրել: Վոչ վոքի բաց չեյին թողնում, այլ  
տեղն ու տեղն սպանում եյին... սա ուղղակի սպան-  
դանոց եր, փողոցները դիակներով լիքն եյին, չեյին  
խնայում վոչ յերեխաների, վոչ կանանց, վոչ ել ծե-  
րերին—ամենքն ել իրենց բաժինը ստացան: Զհա-  
վատաս, իբր թե դաշնակցականները չեզոք  
դիրք են բռնել. նրանք ճանապարհները փակեցին,  
վորպեսզի գյուղերից ոգնություն չհասնի... Թուրքա-

\* Сур. Шаумян, „Бакинская Коммуна“, եջ 36.

կան քոլոր տները, խանութները և մագաղինները կողոպտված և այրված են... Համազասպը մեծ քաջություն ցույց տվեց և լավ ջարդեց նրանց»։ Դաշնակցական Թառայանի նամակը բերելուց հետո Գեղամյանն իր կողմից ավելացնում է, թե դաշնակցական զինվորներն «իրենց համար արհեստ եյին շինել թաթարներին կողոպտելը»։ Նույն բանը ստիպված եր խոստովանվել նաև դաշնակցական «Արև» թերթը, վորը գրում եր թե՝ «Մեր շարքերում խառնվել են վատահոգի թալանչիներ, թույլ ու անպաշտպան կանանց ու յերեխաների վրա ձեռք բարձրացնողներ»։ Դեռ մարտի դեպքերի ժամանակ նկատվեց այդ զզվելի արատը»։\*

Յեթե Հայոց Ազգային Խորհուրդը մի կողմից իբր թե չեզոք ու լոյալ եր մնում, ապա միաժամանակ նա զիրեկտիվսեր եր տալիս ազգային կոտորածի վերածել մարտի անցքերը, ոգտվելով իր տրամադրության տակ յեղած զինված ուժերից։ Կասկած չկա, վոր մեր կուսակցության Բագվի կազմակերպությունը Շահումյանի և Զափարիձեյի գլխավորությամբ անխուսափելի կերպով ստիպված լինելով ոգտագործել Հայոց Ազգային Խորհրդի զորամասերը, իր վարած ճկուն տակտիկայով կարողանում ե մեկուսացնել ու չեղոքացնել դաշնակցական ավանտյուրիստական միտում-

\* «Տաճիկները Կովկասում և Բագվի անկումը», — Յեղիշե Գեղամյան, 1919 թ. Բագու, եջ 49—50։ Նամակը տպված է „Կաспիյ“ թերթում, 1919 թ. № 77։

ները։ Մեր ընկերները Բագվում յերբեք ել բարի  
միամտություն չեն ունեցել դաշնակցականների ռեակ-  
ցիոն հականեղափոխական դիրքավորման մասին։  
Նրանք շարունակ և անվերջ քննադատել ու պախա-  
րակել են դաշնակցության գործնեյությունը, չհրա-  
ժարվելով այդ կուսակցության աղղեցության տակ  
գտնվող զորամասերն ոգտագործելուց։ Նրանք ամեն  
միջոց ձեռք են առել լիկվիդացիայի յենթարկելու  
դաշնակցական զորամասեր։ Նույնիսկ Բագվի Խոր-  
հուրդը վորոշում ե ընդունում այդ մասին։ Այլ խնդիր  
ե, վոր այդ վորոշումն մի շարք պատճառների  
շնորհիվ հսարավոր չի լինում իրագործել։ Կենտրոնից  
հյուսիսից ոժանդակություն ստանալուց բան չի դուրս  
գալիս։ Այնտեղից ուղարկված Պետրովի զորամասը  
քիչ եր և բնական ե, վոր նա չեր կարող վճռական  
դեր խաղալ Բագվի պաշտպանության գործում։ Սե-  
փական զինվորական ուժերի պակասը և ֆրոնտը  
պաշտպանելու անհրաժեշտությունն այնքան սուր  
կերպով եր դրված, վոր Բագվի Խորհուրդը ստիպված  
է լինում նույնիսկ հրավիրելու Բիշերախովին իր զո-  
րամասով։ Սխալ կիներ կարծել, թե անգլիացիների  
հետ կապ պահպանող և ռեստավրացիոն նպատակներ  
հետապնդող այդ զինվորականին Բագու կանչելու  
պատճառն այն ե, վոր նրա այդ դիրքի մասին ամե-  
նախ տեղեկություն չուներ Բագվի Խորհուրդը։ Շա-  
հումյանի հետևյալ խոսքերն ասում են, վոր Խոր-  
հուրդը համենայն՝ դեպս վորոշ բան զիտե և լուրջ

կասկածներ ուներ այդ մասին։ Բայց և այնպես ստիպված եր հրավիրելու՝ վորպեսզի գոնե այդ կերպ մի քիչ եւ յերկարացվի Բագվի պաշտպանության գործը։

«Փայլուն զորամաս ե — ասում ե Շահումյանն իր ճառերից մեկում, — մենք ամբողջ ժամանակ տատանվում ենք, թե նա (Բիչերախովը) անզիական ազնութեած ու ուստական պատրիոտ, վորն ուզում ե փրկել Ռուսաստանը, մտածեցինք մտած եցինք և վերջի վերջո վճռեցինք, վոր նա ազնիվ ուստապատրիոտ ե, իսկ դուքս յեկավ վոր անդիական վարձկան ե»։\*

Անշուշտ Բիչերախովն իր զորամասով դրությունը չփրկելով, նահանջը հետաձգեց։

Ընդհանրապես սեփական հարազատ զինված ուժ չունենալն անհաղթահարելի դժվարություններ եր գնում նրանց առաջ։ Թերեւս պետք եր ավելի վճռական լինել այդ ասպարեզում։ Հուսալի զինված ուժեր կազմակերպել։ Յեթե պրոլետարիատի վորոշ մասի յետամացության պատճաններում դա շատ դժվար գլուխ յեկող գործ եր, ապա այստեղ վորոշ չափով դեր է խաղում նրանց դրական սպասումը հյուսիսից։ Հյուսիսից զինված ուժերի ոգնությանը սպասելով և դրանց հետ վորոշ հույսեր կապելով, անհրաժեշտ եր միաժամանակ Բագվում ավելի յեռանդուն ձեռնար-

\* „Как большевики пришли к власти в Баку“, հջ 35

կումների դիմել՝ հավատարիմ զորամասեր ունենալու։  
Այս իհարկե չի նշանակում, վոր պետք եր հրաժար-  
վել հակառակորդ զինված ուժերն ոգտագործելուց։  
Վոր Բագվի Կոմունան թեթև ու միամիտ չի յեղել  
Բիշերախովի հրավիրման գործում, վկայում ե այն,  
վոր հունիսի կեսերին ֆրոնտ անցած նրա զորա-  
մասի կազմի դրության և տրամադրությունների մա-  
սին մանրամասն տեղեկություն ե ստացվում 18 թվի  
հունիսի 26-ին Ենգելից։ Հետեւյալ տողերը պարզում  
են այդ զորամասի քաղաքական, բարոյական վիճակը։

«Աշխատավարձով բարձր կազմալուծված, բոլորո-  
վին ազատ՝ պատիժ կրելուց, դիսցիպլինի բացա-  
կայությամբ, անգործնեյությամբ, քաղցած պար-  
սիկների ծառայությունից ոգտվելու հնարավորու-  
թյունով ապահովված, յերկրատև բացակայությունից  
հետո նրանց մեջ անգամ տուն վերադառնալու ցան-  
կությունը լիովին բացակայում եր»։\*

Լքված ու կազմալուծված մի զորամաս, վոր վարձ-  
կանի դեր միայն կարող եր կատարել։ Հետագա-  
յում Բիշերախովն իր զորաբանակով մեծ քյալագ ե  
խաղում Կոմունայի գլխին։ Անգլիացիներին հրավիրե-  
լու խնդիրը սուր կերպով դնելու համար, նա հուլիս  
31-ին բոլորովին թողնում է ֆրոնտը և անհասկանալի  
պատճառներով դեպի Դերբենդ շարժվում։

Դրությունը կասպից նավատորմի վրա նույնպես  
անմիտթար եր։ Նավաստիների անձնական կազմը

\* Сур. Шаумян, „Бакинская Каммуна“, եջ 119

նպաստավոր չլինելուց բացի գտնվում եր անգլիացիների ազգեցության տակ և յենթակա յեր կազմալուծման պրոցեսին։ Այդ ամենի մասին Բագվի Խորհրդի առաջ լուրջ կերպով հարց եր դնում նավատորմի կոմիսար ընկ. Կուզմինսկին։ Զափարիձեյի անունով գըրպած իր նամակում նա ասում ե, վոր իր նպաստակն ե «առողջացնել կամանդան և փոխել նրանում տիրող միանդամայն անվույթ վերաբերմունքը դեպի հեղափոխությունը։ Նավատորմի վերջնական քայլայման համար հնարել են նոր մարդկանց ընդունելության միանդամայն վոճրագործ կանոնադրություն»։ Նա ասում ե, վոր ընդունվողների մեջ կան զեմոկրատական հասարակության թափթփուկներից, վորոնք նավատորմ են մտնում անպատիժ կերպով, խուլիգանություն անելու։ Վերջում Կուզմինսկին խնդրում է Բագվի Խորհրդից մի շարք կտրուկ եյական միջոցների դիմելու «նավատորմն ամբողջությամբ Խորհրդային իշխանության ձեռքն առնելու, հաստատ և կարող հնարան ստեղծելու համար»։

Սակայն նավատորմի նկատմամբ իր ժամանակին վոչ մի գործնական միջոց ձեռք չառնվեց, գրում ե Սուր. Շահումյանը։\* Նրա կարծիքով Բագվի Խորհրդային իշխանության խոշոր սխալներից մեկը ուազմանավատորմի թերագնահատումն ու դեպի այն ցուցադրած պասսիվ վերաբերմունքն եր։ Ուազմական ուժերի անմիտար լինելու պատկերը լրացնելու տեսակետից

\* Сур. Шаумян, „Бакинская Каммуна“, № 49

պակաս կարեոր չենակ այն, վոր հին ժամանակ նավթաւարդյունաբերության բանվորներն ազատված լինելով զինվորական ծառայությունից, իրենցից վարժ ու կարող ուժ չեյին ներկայացնում։ Յեվ շատ դժվար ենրանցից համապատասխան զինվորական ուժ պատրաստել, քանի վոր դա կապված եր ժամանակի հետ։ Բացի այդ բոլորից, Բագվի պաշտպանությամբ զբաղված բանակը քայլայելու նպատակով Ենգելիից Բագույե ուղարկվում վորմն դաշնակցական Զաղեթյան։ ԶԵ վոր անգլիացիներին պետք եր հրավիրել՝ անզեն ու անպաշտպան Բագվի պրոլետարիատին անյել դրությունից փրկելու անվան տակ։ Պետք եր այնպես անել, վոր նրանց գալստյանը սպասելին և խնդրելին։ Բիչերախովի մոտ ուազմաքաղաքական հետախույզի պաշտոն ունեցող դաշնակցական այդ Զաղեթյանի մասին Շահումյանին Ենգելիից հետևյալն ե գրում արեելյան պարսկական ֆրոնտի Ուազմահեղափոխան Խորհրդի նախագահ ընկ. Զելյապինը. «Զաղեթյանին Հեղափոխական Կոմիտեյից վտարելու մոմենտը — դա դաշնակների քաղաքականությունը պարզելու սկիզբն ե։ Դաշնակները կապ են պահպանում անգլիացիների հետ։ Բոլոր ուժերով ձգտում են նրանց Բագու բերելինչ ել վոր լինի։ Հեղափոխական Կոմիտեն պիտի հեռացվի Ենգելիից, վորպես դրան խանգարող որգան, սա կուսակցության (Դաշնակցության) առաջին քայլն եր։ Կասկածներ կան, վոր Բիչերախովը (չգիտեմ), իսկ սպայությունը լոգունգ ունի տապալելու Խորհրդային

իշխանությունը Բագվում, զինվորական դիկտատուրա  
հաստատելու և դաշնակների, անզլիացիների ու զո-  
րամասի հետ միասին գրավելու Թիֆլիսը և դուրս քշելու  
գերմանո-տաճիկներին։ Ի սեր աստծո, զգուշ դաշ-  
նակների հետ»։ Մի այլ տեղ նույն Զելյապինը ասում  
է. «Զաղեթյանը պատռեց իր դիմակը և կանգնեց աջ  
դաշնակի վողջ հասակով»։ Վոչ միայն սոցիալիստին,  
այլ և քաղքենու համար ել խորթ վարմունքով նա  
հարձակվեց ինձ վրա. Զաղեթյանն ինձ մեղադրում ե  
96 հազար ոռուբլի գողանալու մեջ»։

Ընդհանրապես անզլիացիներին Բագու բերելու առ-  
թիվ հականեղափոխական կուսակցությունները շատ  
վաղուց եյին սկսել բանակցությունները։ Անզլիա-  
ցիների ոգնությամբ Բագուն գերմանո-տաճկական  
արշավանքից պատսպարելը վոչ մի հիմք չունի։ Դաշ-  
նակները շատ առաջ եյին սկսել բանակցություն-  
ներ անզլիացիների հետ, չնայած նրան, վոր այդ  
ժամանակ Բագվին անմիջական վտանգ չեր սպառնում։  
Գեներալ Դենստելիլը այդ մասին իր մեմուարնե-  
րում ասում է. «Ապրիլի 21-ին արդեն յերևացին վե-  
րահաս գարնան անվիճելի նշանները։ Յերկու որ  
անց մեզ մոտ յեկավ մի հայ քժիշկ Բագվից,  
այնտեղի Հայոց Ազգային Խորհրդից, խնդրելով մեր  
ոգնությունը և մեզ խորհուրդ տալով, վոր անմի-  
ջապես շարժվենք դեպի աշխարհի այդ մասը»։ Նույն հարցի մասին ահա թե ինչ ե գրում  
անզլիական գեներալ Տոմսոնը Հայոց Ազգային Խոր-

հրդին, Բագվի Կոմունայի անկումից հետո, 1918 թվի նոյեմբերին.

«Խնդրում եմ ընդունել իմ սիրալիք շնորհակալությունս ձեր նամակի համար, վորով դուք շնորհավորում եք մեզ մեր թշնամիների հանդեպ տարած վերջնական հաղթանակի համար։ Ինձ համար չափազանց հաճելի յե անձամբ հանդիսատես լինել այն գնահատելի ծառայություններին, վոր հայժողովուրդը ցույց տվեց դաշնակիցներին։ Դուք կարող եք հավատալ, վոր այդ ծառայությունները կգնահատվեն։ Դաշնակիցների մտադրությունները ձեզ լիովին հայտնի յե և դրանց կյանքի մեջ գործադրման համար պետք ե սպասել մոտիկ ապագային»։

Անդիական գեներալների այս տողերն ամենաին կասկած չեն թողնում այն մասին, վոր Բագվի հականեղափոխական կուսակցությունները և նախ և առաջդաշնակցությունը հենց սկզբից կանոնավոր կապ են հաստատում անդիացիների հետ և շարունակ նրանց Բագու հրավիրում։ Այդ նպատակին հասնելու համար նրանք խոչընդոտներ ու արգելքներ են ստեղծում Բագվի Խորհրդի առաջ, թուլացնում նրա Փրոնտը։ \*

\* Դաշնակցականների մասին խոսելիս այստեղ մի հարց ևս պիտի շեշտել։ Հայտնի յե, վոր Անդրկովասյան սեյմի որոք նրանք Թիֆլիսում մտածում և պլաններ եյին կազմում, վոր միգուցե Թուրքիայի համաձայնությամբ հն բավոր լինի նրա պետության սահմաններում միացյալ Հայաստան ստեղծել։

Դաշնակներից ամենաին յետ չելին մնում իրենց հականեղափոխական գործնեյությամբ եսերները, մուսավաթն ու մենչեկները։ Անզլիացիների հետ բանակցելուն զուգընթաց եսերները պղտորում եյին Բագվի ոռուս բանվորութան միտքը, նրա մեջ ազգայնա-

Այսպես, որինակ՝ Բաթումից Պոլիս մեկնող դաշնակցական պատգամավորության նախագահ Անարոնյանը պատգամավորության նպատակների մասին հետևյալն ե հաղորդում „Կառույ“ թերթին. «Մեր նպատակն ե աղատել և փրկել կովկասի հայությունը, վոր կախված ե միմիայն թուրքիայից, վորին մենք խոստավանեցինք մեր գործած սխալները և վստահ ենք նրա ներողամտության ու բարեկամության վրա»։ Իսկ 18 թվի հունիսի 4-ին, Բ թումում կնքված հայ-տաճկական հաշտության դաշնագրի կետերից մեկում այսպես կոչված Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է գործադրել իր բոլոր ջանքերը՝ Բագու քաղաքից հեռացնելու այնտեղ գտնվող հայկական ուժերը։ Ընդհանուրապես մի շաբաթ փաստեր կարելի յե բերել, վորոնք վկայում են այդ շրջանում Թվֆլիսի դաշնակցականների ունեցած թուրքական որիենտացիա վորոններու մասին։ Դաշնակցության կենտկոմի անդամ Արգումանյանը գտնվելիս ե յեղել Բագվի վրա արշավող գերմանո-տաճկական զորաբանակի շտաբում։ Սակայն Բագվի դաշնակցականների անգլիական որիենտացիան հակադրություն եր ստեղծում նրանց տակտիկայի միջն Թիֆլիսում և Բագվում։ Բայց յերբ Թիֆլիսի դաշնակցականների ուտոպիկ պլաններն անհաջողության են մատնվում, յերբ պարզվում է գերմանո-տաճկական իմպերիալիզմի ազրեսսիվ տենդենցները, նրանք վորոշակի կերպով դեմ են դուրս գալիս տաճիկներին ու մուսավաթին։

կան տրամադրություններ ծնեցնելով։ Մուսավա-  
թական հականեղափոխությունն իր հերթին ամրացել  
եր Գանձակում, վայելելով գերմանո-տաճկական իմ-  
պերիալիզմի ամենալայն համակրանքն ու գործնա-  
կան աջակցությունը և համագործակցելով Թիֆլիսի  
մենշևիկների հետ, ստանալով այդ վերջինի ոգնու-  
թյունը։ Սերտ կապ գոյություն ուներ թե Անդրկով-  
կասյան Սեյմի և թե տաճկական զորքերի գլխավոր  
հրամանատարության հետ։ Մուսավաթականները տա-  
ճիկների հետ նրանցից ռազմական ոգնություն ստա-  
նալու առթիվ բանակցությունները սկսել եյին վարել  
դեռևս Տրապիզոնի կոնֆերենցիայում։ Վրաստանի  
մենշևիկներն անմեղ ձևանալով հայտարարում եյին,  
վոր իրենք կուրսում չեն, վոչինչ չզիտեն։ Հետագա-  
յում, յերբ Բագուն գրավվեց գերմանացիների և տա-  
ճիկների կողմից, Վրաստանի զինվորական կոմիսար  
Գեորգածեն վողջունելով այս վերջինների հաղթա-  
նակն ասում է։ «Վողջունում եմ ձեզ բոլորիդ՝ բոյլշևիկ-  
ներին դուրս քշելու առթիվ և ձեր փառավոր դե-  
մոկրատկան իշխանությունը Բագվում»։

Մակայն սխալ ե կարծել, թե Բագվի կոմունայի  
անկման գործում հիմնական գեր ե խաղացել գերմա-  
նո-տաճկական իմպերիալիզմի արշավանքը։ Կոմունայի  
անկման գլխավոր պատճառներն այդտեղ չպետք ե  
փնտրել։ Եյականը հականեղափոխական կուսակցու-  
թյունների աշխատանքն ե և իմպերիալիստական ողա-  
կավորման ու հեղափոխական Թուսաստանից կտրված

լինելու պայմաններում նրանց հաջողություններն են: Դրան պիտի ավելացնել նաև այն, վոր հացի և ընդհանրապես սպառման մթերքների բացակայությունը նույնապես ազգում ե ստեղծված որհասական վիճակի վրա: Նման դրության մեջ առանձնապես հաջողությունն ե զանում հակահեղափոխական համաձայնական կուսակցությունների՝ անզլիացիների հրավիրման ոգտին տարած ազիտացիան: Այդ բոլորին մասամբ նպաստում եր նաև Բագվի պրոլետարիատի ազգային կազմը և դրան կապված նրա վորակավորումը: Բագվի շրջանում սևազործ բանվորների հիմնական մասսան բաղկացած եր թուրքերից և պարսիկներից, իսկ վորակյալ բանվորները՝ հայերից և ոռուներից: Ազգայնական կուսակցություններին հաջողում ե մեկուսացնելու չեղոքացնել տարբեր ազգության պատկանող բանվորներին, նրանց իրար հակաղբել և դրանով ջլատելու քայլայել պրոլետարիատի միասնական ֆրոնտը: Չափազանցություն և սխալ չի լինի, յեթե ասենք, վոր այդ շրջանում Բագվի պրոլետարիատի զգալի մասը դեռևս չեր ազատված ազգայնական համաձայնական տրամադրություններից: Միգուցե այլ պայմաններում, որինակ յեթե Բագուն կտրված չլիներ բանվորագյուղացիական հեղափոխական Ռուսաստանից, պրոլետարիատի զգալի մասի դասակարգային պարզ ու շեշտակի գիտակցության բացակայությունն այնքան ել վճռական դեր չեր խաղա, քանի վոր հեղափոխության հաղթանակը կենտրոնում այդ դեպքում ուեալ ոգնու-

թյուն կհասցներ Բագվին: Բայց իրականում այդպես  
չեր դրությունը և ծանր ու դժվարին պայմաններից  
յելք փնտրող Բագվի պրոլետարիատը համաձայնական-  
ների ազիտացիայի ազգեցության տակ հաշտվում ե  
անզլիացիներին Բագու կանչելու մտքի հետ: Հու-  
լիսի 25-ին Խորհուրդը վորոշում է 259 ձայնով ընդ-  
դեմ 236-ի անզլիացիներին Բագու հրավիրել: Դրանից  
հետո մեր կուսակցությունը փորձում է մի կերպ փո-  
խել Խորհրդի այդ վորոշումը և դրա համար դիմում ե  
բանվորական մասսայական միտինգներին: Բանվորա-  
կան այդ միտինգներում, համարյա ամենուրեք, բանա-  
ձևեր են ընդունվում, վորոնք վստահության  
քվե տալով բոյլշեկիներին, միաժամանակ  
պահանջում են հրավիրել անզլիացինե-  
րին: Բագվի անցքերին մասնակցողները պատմում  
են, վոր ընդամենը 2 ձայն ե ստացել անզլիացիների  
հրավիրմանը դեմ արտահայտվող բոյլշեկիների բանա-  
ձևը: Նույն կերպ են վարվում նաև բոլոր զինվորա-  
կան մասերը, բացառությամբ մի զրահապատ գնացքի:  
Մենք շեշտում ենք, վոր յեթե այս բոլորը վկայում  
են Բագվի պրոլետարիատի ապրած անասելի ծանր  
դրության մասին—ապա նրանք միաժամանակ արդյունք  
են նրա, վոր այդ նույն պրոլետարիատի մի զգալի  
մասը դեռ վերջնականապես չեր թոթափել իր վրայից  
համաձայնականության ու ազգայնականության փո-  
շին: Նա շարունակում եր ապրել այդ իլլյուզիաներով:  
«Բագվի բանվորության մեծամասնությու-

նը մանը բուրժուական տաղանումների  
յենթարկվելով, անյել դրության մեջ լինելով, գնաց այդ կուսակցությունների (հականեղափոխական) յետեից անգլիական իմպերիալիզմի հետ», ասում ե ընկ. Միկոյանը: \*  
Այսպես, այդ վերջին մոմենտն ես, այն ժամանակվա  
պայմաններում մեծ դեր խաղաց: Հայտնի յե, որինակ,  
վոր անգլիացիներն ենցելիում այնքան ել մեծ ուժ չու-  
նեցին: Դժբախտաբար, նրանց հզորության և հարուստ  
պարենավորում ունենալու հետ կապված լեզենդները  
ցրվեցին միայն հետո, յերբ նրանք թողին Բագուն:  
Յեվ վերջապես, միթե Թիֆլիսում և Վրաստանի  
այլ վայրերում պրոլետարիատի կողմից զգոն հեղափո-  
խական տրամադրություն հայտնաբերելու միջոցին,  
չեր կարելի գոնե վորոշ չափով խանգարել և խոչըն-  
դուներ ստեղծել գերմանո-տաճկական իմպերիալիզմի  
արշավանդի առաջ: Սակայն, մենչեկյան նացիոնա-  
լիստական տրամադրություններով գերված Վրաստանի  
պրոլետարիատի խոշորագույն մասն այդ չեր կարող  
անել: Հենց այդ խոկ տեսակետից մեր կարծիքով  
անպայման ճիշտ են այն ընկերները, վորոնք ասում  
են թե Բագվի կոմունայի անկումը և այդտեղ  
պրոլետարիատի գործած խոշորագույն սխալը հետա-  
գայում մեծ դաս յեղան Բագվի պրոլետարիատի հա-  
մար, նրա հեղափոխական գիտակցության և դասա-  
կարգային կովկածության աճման ու բարձրացման

\* „Правда“, 1928 թ., № 219

տեսակետից։ Կոմունան իր գագաթին բարձրացրեց հեղափոխական շարժումը և Բազվի ու Անդրկովկասի պլույտարիատին ազատագրեց համաձայնական տեսդենցներից, գործնականում ցույց տալով դաշնակների, մենչեւիկների, մուսավաթականների և եսերների դավաճանությունն ու սնանկությունը։ Նա արթնացրեց, դգոն և աչալուրջ դարձրեց բանվոր դասակարգին։ Բագվի բանվորների խոշոր մասը, վոր գնում եր իմպերիալիզմի ազգայնա-շովինիստական ազենտների յետելից, հետազայում յերես դարձրեց նրանցից։

Հիմա մի քիչ կանգ առնենք կոմունայի գյուղացիական քաղաքականության վրա։ Դժբախտաբար այդ ասպարեզում կոմունայի գործնական աշխատանքներին վերաբերող նյութեր չկան մեր տրամադրության տակ, բացի նրա սկզբունքային դիրքավորման հետ կապ ունեցող դոկումենտներից։ Այդ նյութերի ու դոկումենտների քննությունը մեզ բերում է այն յեղրակացության, վոր կոմունան և նրա առաջնորդները ճիշտ գիծ են վարել այդ ուղղությամբ։ Բանվորագյուղացիական դաշինքի լենինյան իմաստը միանգամայն մոտ եր և ընդունելի Շահումյանի ու Զափարիձեյի համար։ Նրանք լավ եյին գիտակցում, վոր դրա մեջ ե Խորհրդային իշխանության ուժն ու հիմքը։ Գիտեյին, վոր պլույտարական Բագուն առանց գյուղացիական Աղբբեջանի յերկար դիմանալ չի կարող։ Դժբախտաբար այդ ասպարեզում նրանց թափած ջանքերը մնացին անհետեանք։ Թուրք գյուղացիու-

թյան վերին աստիճանի յետամնացության և բեկաղալրական հականեղափոխության ունեցած ամուրդի գերքերի հետևանքով Գանձակի նահանգում տեղի ունեցող ագրարային խլըտումները և բեկերի ու խաների դեմ կիրառվող հեղափոխական միջոցները չնշին եյին և շատ հեռու մասսայական շարժման բովանդակություն կրելուց։ Կոմունայի հաստատումից դեռ շատ առաջ լայն կամպանիա յեր տարվում հողերը զրավելու մասին, Թերևս, հետևյալ հանգամանքը ևս մասամբ դեր խաղաց այդտեղ։ Բագուն, վորպես արդյունաբերական կենտրոն, Աղբբեջանի գյուղացիության հետ կապված չեր. այստեղ բացակայում եր տնտեսական անմիջական կապը քաղաքի և գյուղի միջև։ Գյուղը քաղաքին հաց չեր տալիս, քաղաքն ել գյուղին արդյունաբերական ապրանքներ—բացի նավթից։ Զենք խոսում թուրք աշխատավորների պակասի մասին։ Նրանց թիվը մատների վրա յեր հաշվվում և գյուղի աշխատավորների պակասը ամենալուրջ խնդիրներից եր։

Բագվի Կոմունայի և նրա առաջնորդների գյուղացիական հարցի մասին ունեցած տեսակետը՝ Աղբբեջանի իրականության կոնկրետ պայմաններում՝ ճիշտ ներկայացնելու համար ավելորդ չե մի քանի մեջըերումներ անել այդ առթիվ Շահումյանի և Զափարիձեյի ունեցած յելույթներից։ Թե ի՞նչ մեծ նշանակություն եր տալիս Ստեփան Շահումյանը գյուղացիության հարցին և նրա դերին հեղափոխության

մեջ՝ այդ յերեսում եւ նրա այն ճառից, վոր նա արտասանել եւ Բագվի գավառի գյուղացիական պատգամավորների Խորհուրդների Համագումարում 18 թվի մայիսին.

«... Բայց շարունակ ընդհանուր ջերմ ցանկություն, ընդհանուր յերազանք եւ յեղել նաև գյուղացիների ներկայացուցչությունը։ Յես հույս ունեմ, վոր մենք շուտով կտեսնենք այդ աշխատանքի հետեւանքները, վոր ամբողջ նահանգում շուտով կլինի մի կառավարություն՝ բանվորների և գյուղացիների կառավարություն։ Մեր գլխավոր անելիքն եւ հանդիսանում բարձրացնել գյուղացիներին, նրանց քաշել գեպի կորիվ մեր ընդհանուր թշնամիների դեմ, ինչպես և քաշել Անդրկովկասում բանվորների ու գյուղացիների միասնական կառավարություն ստեղծելու գործին»։

Զենք խոսում այն մասին, վոր այդ նշանակալից խոսքերում Շահումյանը նախատեսել եւ Անդրկովկասյան ֆեղերացիայի գաղափարը<sup>\*</sup>։ Իր յելույթներից մեկում գյուղացիության դերին անդրադառնալով, Զափարիձեն ասում եւ. «Մենք գիտենք, վոր յեթե գյուղացիներին մեր կողմը չքաշենք, ապա մեր դրությունը շատ կբարդանա»։

Բագվի Կոմունայի ջանքերով հույս ամսում հրավիրվում եւ գյուղացիական պատգամավորների Խոր-

<sup>\*</sup>) Տես Բագվի հայերեն «Կոմունիստ» 28 թ. № 221.

հուրդների Համագումար, վորին ներկա եյին 100 մարդ, մասնակցում եյին միայն Բազվի գավառի ներկայացուցիչները։ Համագումարը կազմակերպված եր վատ. պատգամավորների թվում մեծ չափով կուլակներ կային։ Հիշյալ Համագումարին Բազվի Խորհուրդը դիմում ե հետեւյալ կոչով։

«Ընկեր գյուղացիներ, մենք դիմում ենք ձեզ անմիջապես կազմակերպվելու գյուղացիական կոմիտեներում, գյուղացիական պատգամավորների շրջանային, գավառային և նահանգային խորհուրդներում, և մեզ հետ, բանվորների, զինվորների և նավաստիների պատգամավորական խորհրդին միանալով՝ ձեր Խորհուրդներով և ձեր ոգնությամբ ազատագրվելու կալվածատերերի և բեկերի դարավոր սարկական լծից. նրանց հողն ու ամբողջ ինվենտարը պիտի հանձնել գյուղացիական կազմակերպությունների ձեռքը, վոչնշացնել հին վաճառված դատարանները, նրանց փոխարեն հիմնելով ժողովրդական հեղափոխական դատարաններ»։

Սակայն ինդիրն այն ե, վոր այդ ճիշտ լոգունգները կյանքում չեյին կիրառվում։ Յետամնաց թուրք գյուղացիությունը դրանց արձագանքում եր շատ անկազմակերպ և թույլ։ Այստեղ քիչ դեր չեր խաղում այն հանգամանքը, թե ինչպեսի վերաբերմունք եյին հայտնաբերում դեպի գյուղը նրա հետ շարունակ գործ ունեցող զորամասերը։ Պետք ե ասել, վոր բանակում թագավորող դաշնակցական քյալլագյողները

իրենց թալանով ու կոտորածով յետ եյին վանում՝ գյուղացիությունը Խորհրդային իշխանությունից։ Հանձինս բանակի, Աղբբեջանի թուրք գյուղացին իր ազատագրողին չեր տեսնում և դրա հետևանքով նա ավելի շուտ առանց դիմադրության յենթարկվում եր մուսավաթականների ազիտացիային՝ թե Բազվում վոչ թե բոյլշկիներն են նատած, այլ հայերը — դաշնակցականները։ Կոմունան և նրա ղեկավարները լավ եյին զիտակցում և այն, թե ինչ հսկայական գործ կարող ե կատարել Կարմիր, պլուտարական բանակը. գյուղի արթնացման գործում, ճիշտ լողունգների շնորհիվ այնտեղ հեղափոխական ապստամբական տրամադրություններ ստեղծելու և դրանով գյուղացիությունը բանվոր դասակարգի ակտիվ դաշնակիցը դարձնելու։ Զինվորա-ծովային գործերի կոմիսարիատը հունիսի 6-ին հետեւյալ դիմումն ե ուղղել բանակի գինվորներին.

«Գիտցեք, ընկեր զինվորներ, վոր յեթե կռվի մեջ խնայեք ու պահպանեք հայ, վրացի և թուրք գյուղացիների կյանքն ու տնտեսությունը, յեթե դուք ոգնեք նրանց զենքի ուժով տապալելու իրենց կալվածատերերին և տիրելու նրանց հողերին, այն ժամանակ փաշաների, բեկերի և աղնվականների դավադիր յելույթները ձեզ ամենեին չեն վնասի»։

Բայց դժբախտությունն այն եր, ինչպես շեշտեցինք, վոր Բազվի կոմունայի լենինյան քաղաքականու-

թյան վոգուն համապատասխանող այդ դիրեկտիվները  
չափազանց թույլ եյին կիրառվում: Կասկած չկա, վոր  
գանձակի ուղղությամբ կազմակերպված արշավանքի  
հիմնական նպատակն եր գյուղի հետ կապվելը, աշ-  
խատավորական լայն մասսաների մեջ ուժեղ հենա-  
րան ստեղծելը, նրանց գործնականորեն շահագրգռելով  
դրանում: Սակայն այնքան կարեոր հիմնական նշա-  
նակություն ունեցող այդ աշխատանքը գլուխ չեկավ,  
գյուղը մնաց հակահեղափոխության գիրկը, կազմելով  
Մուսավաթի, թուրք բուրժուազիայի ու կալվածա-  
տիրության ռեզերվը, ընդդեմ Խորհրդային իշխա-  
նության:

Գյուղացիական քաղաքականության նկատմամբ  
ունեցած ճիշտ դիրքավորմանը զուգընթաց Բազվի կո-  
մունայի սոցիալիստական բնույթը վորոշվում է նաև  
նրա վարած սոցիալիստական ձեռնարկումների քաղա-  
քականությունով: Այդ տեսակետից մեծ հետաքրքրու-  
թյուն են ներկայացնում նավթարդյունաբերողների  
ունեցվածքի նկատմամբ գործադրված աղղայնացման  
միջոցները: Պրոլետարիատի հեղափոխական դիկտատու-  
րան չեր կարող յերերվելու տատանվել սոցիալիստական  
հեղափոխության հիմքը կազմող այդ խոշորագույն հար-  
ցում: Յեվ այդ ուղղությամբ կատարած իր գործ-  
նական աշխատանքով կոմունան ցույց տվեց, վոր նա  
խկապես բանվորական լայն մասսաների շահերի հա-  
րազատ արտահայտիչն ե ընդդեմ հարստահարիչների  
և շահագործողների: Բուրժուազիայի վրա դրվում ե

50 միլիոն կոնտրիբուցիա։ Այդ վերջինը դիմադրում է և հրաժարվում է տալ։ Միայն ուեպրեսիվ միջոցների դիմելուց հետո յեւ, վոր նույն բուրժուազիան համաձայնում է վճարել 50 միլիոնը։ Բաղաքի նավթահողերի ազգայնացումը ստիպում է նավթարդյունաբերողներին կոմունայի գանձարկղը մտցնել պետական ռենտա։ Ինչ վերաբերում է նավթարդյունաբերության ազգայնացմանը, ապա իշխանությունը գրավելուց անմիջապես հետո Ստեփան Շահումյանը դնում է այդ հարցը։ Այստեղ պետք է արձանագրել, վոր այդ խնդրում կենտրոնի միջամտության հետևանքով վորոշ կոնֆլիկտ առաջացավ, վորը սակայն հետապայում հարթվեց։ Կենտրոնը վախենում եր, վոր այդ միջոցին Բագվում նավթարդյունաբերությունն աղդայնացնելուց հետո հնարավոր չի լինի սկզբնական շըրջանում աշխատանքի արտադրողականության նախկին թափը պահպանել։ Ինչպես հետապայում ճիշտ կերպով նկատել ե Շահումյանը, այստեղ խնդիրը վերաբերվում եր վոչ թե ազգայնացման սկզբունքին, այլ նրա կիրառման ժամկետին։ Բնորոշ ե, վոր նավթարդյունաբերողներն ամեն կերպ ձգտում են ողտագործել Բաղվա այն ժամանակվա պայմաններում անխուսափելիորեն ստեղծված կոնֆլիկտի ընույթ կրող այդ դրությունը և կենաքրոնի դիրեկտիվները տեղական իշխանությանը հակադրելով խանգարել նրա ազգայնացման քաղաքականությանը։ Նույնիսկ նրանց հաջողվում է իրենց ինժիներներին

Կոմունայի դեմ հանել, վորոնք հայտարարում են, վոր  
չեն կարող աշխատել ազգայնացման հետևանքով։ Հա-  
կառակ այդ ամենի, շնորհիվ վճռական և յեռանդուն  
գծի, մայիս ամսին ազգայնացման ե յենթարկվում  
նավթարդյունաբերությունը։ Միաժամանակ նախա-  
պատրաստական յեռուն աշխատանքներ են կատար-  
վում տների ազգայնացման համար։ Դրա շուրջը  
մասսայական հասարակական կարծիք ստեղծելու հետ  
միասին, նշվում են նաև գործնական ուղիները։ Այդ  
ասպարիզում կատարված աշխատանքների մասին հե-  
տաքրքիր բաներ են պատմում Բագվի նախկին բան-  
վորները իրենց հիշողություններում։ Գրավման են  
յենթարկվում նաև բանկերը, վորոնց թիվը Բագվում  
համնում եր 10-ի։ Սակայն անհրաժեշտ ե շեշտել,  
վոր այդ կետում կոմունան վորոշ չափով հապաղում  
ե հայտնաբերում։ Բանկերն ազգայնացման յենթարկ-  
վեցին՝ իշխանությունը գրավելուց միայն յերեք շա-  
բաթ անց։ Սխալ եր այդպիսի մեծ ժամանակամիջոց  
տալ հակառակորդին և այդքան ուշ ձեռնարկել այդ  
հսկայական կարևորություն ունեցող աշխատանքին։

Վերջում մի փոքր ծանրանանք այն քաղաքակա-  
նության վրա, վոր տանում եր Բագվի կոմունան  
պրոլետարիատին ու նրա գործին թշնամի կուսակցու-  
թյունների և կազմակերպությունների նկատմամբ։  
Ինչ խոսք, վոր հարցերի այս խումբը վճռական նշա-  
նակություն ուներ Բագվի կոմունայի պահպանման  
ու ամրացման համար։ Զափազանցություն չի լինի,

յեթե ասենք, վոր այստեղ կոմունան կատարել ե  
խոշորագույն սխալներ, վորոնք չեցին կարող չանդրա-  
դառնալ նրա քաղաքականության վրա: Թերագնա-  
հատվել և բավարար չափով անհրաժեշտ ուշադրու-  
թյուն չի դարձվել հականեղափոխական կուսակցու-  
թյունների գործնեյությունը չեզոքացնելու և մե-  
կուսացնելու վրա: Մենք չենք խոսում նրանց դեմ  
մղված կովի մասին: Այդպիսին աարվում ե, բայց վոչ  
ուժեղ: Հիմնականն ու կարեորը վոչ թե նրանց դեմ  
ընդհանրապես պայքարելն եր, այլ այդ պայքարը  
ճիշտ չափերի հասցնելը և հականեղափոխական կու-  
սակցություններին լեզար աշխատանքի իրավունքից  
ու հնարավորությունից բոլորովին զրկելը: Մինչդեռ  
փաստ ե այն, վոր եսերները, դաշնակները ու մենշե-  
վիկները մինչև վերջն ել մնացել եյին Բագվի Խոր-  
հրդի կազմում, հրատարակում եյին իրենց սեփական  
մամուլը և ունեյին լեզար գործնեյության բոլոր  
պայմաններն ու հնարավորությունները: Հականեղա-  
փոխության կենտրոն հանդիսացող Յենտրոկաս-  
տին ևս շարունակում եր իր գոյությունը, նրա լիկ-  
վիդացիայի համար կտրուկ միջոցներ չեցին ձեռնար-  
կում: Պարզ ե, մանավանդ ուժեղ հարազատ բանակի  
բացակայությամբ, թե ինչ հակայական հակախորհըր-  
դային, հականեղափոխական աշխատանք եր կատարում  
համաձայնական նացիոնալիստական մամուլը, թունա-  
վորելով լայն մասսաների տրամադրությունն ու գի-  
տակցությունը: Հակառակորդի մամուլը, նրա լեզար

աշխատանքը կազմալուծում և քայլքայում եր հեղափու-  
խության ֆրոնտը, ամրացնում եր հականեղափոխու-  
թյունը։ Հեղափոխությունն ու նրա գերագույն շահերը  
պաշտպանելու նպատակով կյանքի կոչված նոր իշխա-  
նության արտակարգ մարմինները նույնպես շատ թույլ  
ելին ծավալել իրենց անհրաժեշտ և կարեոր գործնեյու-  
թյունը։ Այն փաստը, վոր Կոմունայի գոյության ամ-  
բողջ ընթացքում գնդակահարվել են միայն մի քանի  
հականեղափոխականներ — գալիս ե ասելու, վոր իս-  
կապես մեղմ և յերբեմն ել միանգամայն ավելորդ  
գգուշավոր քաղաքականություն ե տարվել հակառա-  
կորդի հանդեպ։ Մի բան, վոր անպայման նպաստել  
ե այդ վերջին ուժեղացմանը։ Փաստորեն բացակա-  
յել ե հեղափոխական, մասսայական, տեսորիստա-  
կան ուժիմը, իշխանության հիմքերն ամրացնող և  
անսասան դարձնող կարեորագույն այդ ֆակտորը։  
Նույնիսկ ծանր ու դժվարին պայմաններում ել  
ոխալ եր այդ աստիճան մեղմ լինելը։ 18 թվին Բա-  
գվում յեղած և Կոմունայի աշխատանքին մասնակ-  
ցած ականատեսները վկայում են դրա մասին։

«18 թվին մեր իշխանության տապալման ամենա-  
գլխավոր պատճառներից մեկը հականեղափոխության  
դեմ պայքարել չկարողանալն եր, — ասում ե իր գըր-  
քում Սուրեն Շահումյանը\*): Ստեփան Շահումյանին  
ուղղած իր նամակներից մեկում մեզ արդեն հայտնի  
Զելյապինը գրում է. «Դուքս քշեցեք բոլոր նրանց,

\* „Бакинская Коммуна“, № 61.

ովքեր ներկայանում են կոնտրաբանդի ազատություն  
տալու բողոքով։ Մենք դեռ չափազանց թույլ ենք  
ճգմում վոճրագործներին»։

Հակառակորդների ու նրանց հականեղափոխական  
գործնեյության նկատմամբ վարած թույլ ու մեղմ  
քաղաքականության վրա վորոշ չափով լույս ե սփոռում  
Ստեփան Շահումյանի հետեւյալ խոսքերը.

«Յեթե մենք տանեյինք նույնպիսի քաղաքական  
ություն, վորպիսին վոր տանում են Թիֆլիսում, ապա  
Այուղոն, Սաղովսկին և Աթաբեկյանը վաղուց բանտում  
կլինեյին։ Դուք մեզ պիտի նկատողություն անեք  
նրա համար, վոր մենք չափազանց համբերատար ենք  
դեպի այդ (հակառակորդի) ազիտացիան»։

Այս տողերում Շահումյանը պարզ ու վորոշ դնում  
է հակառակորդի ազիտացիայի նկատմամբ իրենց բըռ-  
նած հականարձակման թույլ քաղաքականության  
հարցը։ Նույն բովանդակությունն ունեցող մի շարք  
այլ միջբերումներ ևս կարելի յե անել, սակայն դրանք  
մեզ շատ հեռու կտանեն։ Ամեն կասկածից վեր ե,  
վոր մեղմ ու զգուշ քաղաքականությունն ևս շատ  
թանկ նստեց Բագվի կոմունային։

ԿՈՉ ԲԱԳՎԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ \*

(«Հեղափոխության թանգարանի» արխիվից)

Բագվի պրոլետարիատը Բագու կանչեց անգիտական զորքերը, ծանր կացության մեջ դրված լինելով՝ մի կողմից Բիշերախովի դավաճանությամբ, վորը հուլիսի 30-ին և 31-ին մերկացրեց ճակատը և Դաշնակցության կողմից, վորը չկամեցավ ճակատ ուղարկել իր զորամասերը, — ոյուս կողմից՝ մոլորության մեջ ձգված լինելով անգլիական իմպերիալիստների վարձկաններից, վորոնք ձգտում են զրավել Բագուն ու ուազմական համաձայնություն կնքել անգլիացիների հետ՝ հակառակ բանվորա-գյուղացիական Ուռսաստանի կամքի, հակառակ կենտրոնական Խորհրդային կառավարության մերժման:

Այս մոմենտից Բագվի պրոլետարական, սոցիալիստական պաշտպանությունը փոխվում է պատերազմի — յերկու իմպերիալիստական կոռալիցիաների միջև:

Բագվում այլևս հեղափոխական ճակատ գոյություն չունի, կա միայն իմպերիալիստական ճակատ: Կռվում են յերկու ուժեր, վորոնք հավասարաշափ թշնամական դիրք ունեն բոնած դեպի Ուռսաստանի Բանվորա-Գյուղացիական Խորհրդային իշխանությունը:

Այս մոմենտից Ուռսաստանի Խորհրդային իշխանության քաղաքական ու ուազմական ներկայացու-

\* Բագվի կոմունայի վերջին կոչը՝ քաղաքը թողնելու և իշխանությունից հրաժարվելու մասին: Տես. Ատ. Շահումյան, Յերկերի ժողովածու, հատ. II, 190—91 էջ. Մուկովա, Պետհրատ.

ցիչները և Ռուսաստանից ուղարկված զինվորական ուժերն այլևս չեն կարող մնալ Բագվում ու աջակցել անդիմական իմպերիալիստներին, մասնակից լինել աջակողմյան եսերների, մենշեկների ու դաշնակների ներշնչմամբ կատարվող դավաճանության:

Քանի վոր Բագվի պրոլետարիատը մոլորության մեջ եւ ու գերադասում եւ անդիմացիներին խորհրդացին ուժերից, քանի վոր մենք բավականաչափ ուժ չունենք, հարվածելու առաջ քայլող տաճիկներին, իսկ վերջերս նաև գերմանացոց՝ մի կողմից և անդիմական գիշատիչներին մյուս կողմից՝ նրանք չեն կարող մնալ Բագվում:

Սրտի կոկիծով ու նզովք կարդալով են թողնում Բագվուն նրանք, վորոնք յեկել եյին այստեղ կուվելու ու Բագվի բանվորների հետ միասին մեռնելու Խորհրդային Իշխանության համար:

Սակայն թողնելով այս քաղաքը, վորի կորուստը ճակատագրական նշանակություն կարող եւ ունենալ ամբողջ Խորհրդային Ռուսաստանի համար, նրանք չեն ուզում կորցնել իրենց հույսը, վոր Բագվի բանվորներն ու Կասպից նավատորմիղի նավաստիները կհասկանան, թե ինչպիսի դավաճանության մեջ են խառնել դրանց աջակողմյան կուսակցությունները: Նկանք չեն կասկածում, վոր Բանվորա-Գյուղացիական Ռուսաստանը նորից Բագվու կգա:

Բագվի պրոլետարիատը նորից կկապվի Բանվորա-Գյուղացիական Ռուսաստանի հետ:



Ф И Д О Н Й З Б В  
И Б Р А ГИМПУЗИЧЕСКИЙ, Ч О Р  
О Б О Р Ч Ч О Б И Г В 2 Р Ъ.  
ФИГВЕР Москва, Никольская, 10.  
ЦЕНТРИЗДАТ.

ԳՐՔՈՒԹԿԸ ԿԱՐԴԱԼՈՒՑ ՍՈՒԾՉ ՈՒՂՂԵԼ ԱՅՍ  
ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

		Տ պ վ ա ծ ե	Պետք ե կարդալ
Եջ 4 տող	17	վերևից	չի
» 5 » 21	»	խոչնդատներ	խոչնդուներ
» 10 » 4	»	հեղափոխական	հակահեղափոխական
» 11 » 11	»	սոցիալիստական կու- սակցությունների և հեղափոխական դեմո- կրատական	սոցիալիստական կուսակցություննե- րի և հեղափոխական դեմոկրատական»
» 12 » 13	»	ուժեղացնելուց	ուժեղանալուց
» 15 » 9	»	առաջին	առաջիկա
» 16 » 1	»	ե	եր
» 17 » 17	»	դաշնակցության հայ	դաշնակցության հայ
» 23 » 37	»	գիտե	գիտեր
» 25 » 11	»	«Աշխատավարձով	«Բարձր աշխատա- բարձր
» 26 » 14	»	անպատճե կերպով,	, անպատճե կերպով
» 27 » 4	»	ե	եր
» 30 » 19	»	Թվլիսի	Թիֆլիսի
» 44 » 13	»	վերջին	վերջինի

SI  
G.  
11  
11  
11

2  
2 1.  
2 16

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045791

15 4001. (134.)

A 877



---

Е. Грант  
**Бакинская  
Коммуна**

---

На армянском языке



---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗД-ВО НАРОДОВ СССР  
Москва, центр, Никольская, 10